
**ԵՐԵՒԱՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԽՍՀՄ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԸ**

ԴԱՎԹՅԱՆ Գ. Ս.

Երեխաների քաղաքացիության հարցերը միշտ էլ գտնվել են պետությունների ուշադրության կենտրոնում: Այս ոլորտում հատկապես երեխաների իրավունքների պաշտպանությանն են անդրադարձել Է. Պետոսյան, Ռ. Կուլիկը¹: Կարևորելով երեխայի այս իրավունքը՝ պետություններն այն ամրագրել են «Երեխաների իրավունքների մասին» միջազգային կոնվենցիայում, համաձայն որի՝ երեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք: Մասնակից պետությունները պարտավորվում են օրենքով նախատեսված կարգով՝ առանց անօրինական միջամտության, հարգել երեխայի իրավունքը՝ պահպանելու իր ինքնությունը, ներառյալ՝ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը²: Երեխայի քաղաքացիության հարցերը իրենց կարգավորումն են ստացել նաև այլ միջազգային կոնվենցիաներում. մասնավորապես՝ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիան ամրագրել է մի շարք կարևոր դրույթներ՝ բացառել երեխայի առանց քաղաքացիության մնալու հանգամանքը, ըստ որի՝ որևէ պայմանավորվող պետության տարածքում հայտնաբերված երեխան հակառակ ապացույցների բացակայության դեպքում համարվում է այդ պետության քաղաքացիություն ունեցող ծնողներից ծնված³: Կոնվենցիան ամրագրել է նաև արտամուսնական կապից ծնված երեխաների քաղաքացիության հարցերի կարգավորման առանձնահատկությունները, մասնավորապես, եթե որևէ պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն՝ արտամուսնական կապից ծնված երեխան կորցնում է այդ պետության քաղաքացիությունը հայրության ճանաչման հետևանքով, ապա նրան հնարավորություն է ընձեռվում այդ քաղաքացիությունը վերականգնելու համապատասխան մարմնին գրավոր դիմելու միջոցով...⁴:

Չնայած այն փաստին, որ միջազգային կոնվենցիաների և սկզբունքների համաձայն՝ երեխան պետք է ծննդյան փաստով ստանա քաղաքացիություն և չի կարող կորցնել այն, եթե չի դարձել այլ պետության քաղաքացի, գործնականում քաղաքացիություն չունեցող երեխաների թիվը բավական մեծ է: Պատճառն այն է, որ պետությունների օրենսդրություն

¹ Петухова Э. А., Актуальные проблемы усыновления иностранными гражданами детей, имеющих российское гражданство. Дис. канд. юрид. наук, М., 2004, с. 195; Кулик Р. И., Гражданство детей при изменении гражданства родителей. Закон о гражданстве СССР, М., 1980, с. 96.

² Տե՛ս «Երեխաների իրավունքների մասին» միջազգային կոնվենցիա, 1989 թ., հոդվ. 7 և 8:

³ Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման մասին» միջազգային կոնվենցիա, 30 օգ., 1961 թ., հոդվ. 2:

⁴ Նույն տեղում, հոդվ. 5, կետ 2:

ներն այս ոլորտում անկատար են կամ քաղաքացիության տրամադրման հարցում իրականացնում են խտրական քաղաքականություն: Օրինակ՝ Լիտվայի քաղաքացիության մասին օրենքը Լիտվայի քաղաքացիություն չի տալիս այն երեխաներին, ովքեր ծնվել են քաղաքացիություն չունեցող անձանցից, եթե անգամ նրանք ծնվել են այդ պետության տարածքում⁵:

Պատմականորեն երեխայի քաղաքացիությունը որոշվել է հոր գծով: Այդպիսի դրույթների կարելի է հանդիպել մի շարք պետությունների օրենսդրություններում՝ Եգիպտոս, Հնդկաստան, Հարավային Կորեա և այլն: Այժմ նման մոտեցումները համընդհանուր ճանաչում չունեն: Եվրոպական մի շարք պետություններ, ԱՄՆ-ն, Ճապոնիան չեզոք դիրք են ընդունում՝ երեխային քաղաքացիություն տալու հարցում ծնողների սեռի հետ կապված: Նրանք թույլատրում են քաղաքացիության ձեռքբերում ինչպես հոր, այնպես էլ մոր գծով: Համաձայն ԱՄՆ սահմանադրության 1886 թվականի XIV փոփոխության՝ յուրաքանչյուր երեխա, որը ծնվել է ամերիկյան հողում, ԱՄՆ քաղաքացի է՝ ծննդյան ուժով:

Մեր իրականությունում երեխաների քաղաքացիությանը վերաբերող դրույթների առաջին անգամ հանդիպում ենք 1924 թ. խորհրդային քաղաքացիության մասին կանոնակարգում⁶:

1938 թ. «ԽՍՀՄ քաղաքացիության մասին օրենքը ավելի լիարժեք կանոնակարգել էր ծնողների քաղաքացիության» փոփոխման դեպքերում երեխաների քաղաքացիության հարցերը: Որպես հիմք՝ օրենքն ընդունել էր այնպիսի դեպք, երբ երկու ծնողներն էլ փոխել են քաղաքացիությունը, այսինքն՝ կամ երկու ծնողներն էլ ընդունել են ԽՍՀՄ քաղաքացիություն, կամ երկուսն էլ հրաժարվել են ԽՍՀՄ քաղաքացիությունից: Երեխաների քաղաքացիությունը սահմանվում էր հետևյալ կերպ.

• 14 տարին չլրացած երեխաներն ընդունում էին ծնողների քաղաքացիությունը: ԽՍՀՄ քաղաքացիություն կարող էին ընդունել միայն այն դեպքում, եթե երկու ծնողներն էլ ձեռք են բերել ԽՍՀՄ քաղաքացիություն.

• երկու ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում 14-18 տարեկան երեխաները կարող էին փոխել քաղաքացիությունը ցանկության դեպքում: Դա բացառում էր անձի քաղաքացիություն ընդունելը առանց նրա համաձայնության առկայության: Տվյալ անձը չէր կարող նաև կորցնել խորհրդային քաղաքացիությունը ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում, եթե չէր ցանկանում.

• այլ դեպքում 18 տարին չլրորած երեխաների քաղաքացիության փոփոխումը կարող էր իրականացվել ընդհանուր սահմանված կարգով:

«Արյան իրավունքի» սկզբունքը խորհրդային օրենսդրությամբ կիրառվեց ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում երեխայի քաղաքացիության փոփոխման հարցը լուծելիս: 1938 թ. քաղաքացիության մասին օրենքը սահմանում էր այն դրույթը, որ ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում փոխվում էր նրանց՝ 14 տարին չլրացած երեխայի քաղաքացիությունը: 14-18 տարեկան անչափահաս

⁵ *Голостикова А. Н., Гражданство, М., 2007, с. 99.*

⁶ *Кутафин О. Е., Российское гражданство, М., 2004, с. 322-323.*

երեխաների քաղաքացիության փոփոխումը կարող էր տեղի ունենալ միայն նրանց համաձայնության դեպքում: 1938 թ. «ԽՍՀՄ քաղաքացիության մասին» օրենքում չկար հստակ դիրքորոշում երեխաների քաղաքացիության վերաբերյալ օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվելու դեպքում, նաև խորհրդային քաղաքացիների կողմից՝ այլ երկրի քաղաքացի հանդիսացող երեխայի որդեգրման դեպքում: Սակայն 6-րդ հոդվածով նախատեսված էր, որ, բացառությամբ երկու ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքերի, 18 տարին չբոլորած երեխաների քաղաքացիությունը որոշվում էր օրենքով սահմանված կարգով: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ երեխաները որդեգրվելու դեպքում պահպանում էին նախկինում ձեռք բերած քաղաքացիությունը:

Երեխաների քաղաքացիության մասին հարցերը ավելի պարզ կարգավորում ստացան 1978 թ. «ԽՍՀՄ քաղաքացիության մասին» օրենքը⁷ ընդունելուց հետո: Երեխաների քաղաքացիության ձեռքբերման հարցում օրենքը սահմանում էր երեխայի՝ խորհրդային քաղաքացիներից ծնվելու, խորհրդային քաղաքացիների կողմից որդեգրվելու կամ ԽՍՀՄ տարածքում ծնվելու փաստը: Վերոնշյալ օրենքով, ինչպես նաև մինչ այդ քաղաքացիության մասին օրենսդրությամբ սահմանված էր, որ 14 տարին չբացած երեխաները քաղաքացիության փոփոխման վերաբերյալ կամք հայտնելու իրավունք չունեն: 14-18 տարեկան անչափահաս երեխաների քաղաքացիությունը փոխելու համար հարկավոր էր նրանց իսկ համաձայնությունը: Համաձայն 25-րդ հոդվածի՝ ծնողների քաղաքացիության փոփոխման, նաև որդեգրման դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում էր նրանց համաձայնությամբ՝ գրավոր դիմումի առկայության դեպքում: Երեխաների քաղաքացիության փոփոխման հետ կապված օրենքը սահմանում էր, որ ծնողների քաղաքացիության փոփոխման դեպքում, երբ երկու ծնողներն էլ ընդունում էին խորհրդային քաղաքացիություն կամ դուրս էին գալիս Խորհրդային Միության քաղաքացիությունից, փոխվում էր նաև նրանց՝ 14 տարին չբոլորած երեխաների քաղաքացիությունը: Այն ընտանիքներում, որտեղ ծնողները տարբեր երկրների քաղաքացիներ էին, երեխաների քաղաքացիության հարցը այլ կերպ էր լուծվում: 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված էր. «Եթե ծնողներից մեկն ընդունում էր Խորհրդային Միության քաղաքացիություն, իսկ մյուսը օտարերկրյա քաղաքացի էր, ապա երեխան կարող էր ձեռք բերել ԽՍՀՄ քաղաքացիություն խորհրդային քաղաքացի հանդիսացող ծնողի գրավոր դիմումի համաձայն»: Այսպիսով՝ օրենքում երեխայի իրավական կարգավիճակը մեխանիկորեն չէր փոխվում: Որ երեխան նույնպես ընդուներ ԽՍՀՄ քաղաքացիություն, անհրաժեշտ էր խորհրդային քաղաքացի հանդիսացող ծնողի գրավոր դիմումը, ծնողների քաղաքացիության փոփոխման և որդեգրման դեպքում քաղաքացիության փոփոխման մասին դիմումին կից անհրաժեշտ էր ներկայացնել նաև 14 տարին չբոլորած երեխայի համաձայնության մասին գրավոր դիմումը: Իսկ եթե երեխան կորցնում էր ԽՍՀՄ քաղաքացիությունը, անհրաժեշտ էր

⁷ Закон Союза Советских Социалистических Республик о гражданстве СССР. Принят Верховным Советом СССР 1 декабря 1978 г. М., 1978, с. 12.

նաև մյուս՝ ԽՍՀՄ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը: Քաղաքացիության մասին օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասով հաստատվել էր, որ «եթե ԽՍՀՄ քաղաքացի է դառնում ծնողներից մեկը, իսկ մյուսը մնում էր քաղաքացիություն չունեցող անձ, ապա ԽՍՀՄ տարածքում ապրող երեխան ձեռք է բերում ԽՍՀՄ քաղաքացիություն»:

Այս դրույթը ուղղված էր նախ և առաջ բացառելու երեխաների՝ քաղաքացիություն չունեցող անձ դառնալու հնարավորությունը: Մյուս ծնողի համաձայնության կարիքը չէր առաջանում, քանի որ ծնողը, ելնելով քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակից, չէր կարող առաջարկել երեխային այլ տարբերակ, ուստի երեխան մեխանիկորեն ձեռք էր բերում խորհրդային քաղաքացիություն⁸:

Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել էր, որ «եթե ծնողներից մեկն ընդունում է խորհրդային քաղաքացիություն, իսկ մյուսը քաղաքացիություն չունեցող անձ է, ապա ԽՍՀՄ տարածքից դուրս ապրող երեխան կարող է ձեռք բերել ԽՍՀՄ քաղաքացիություն խորհրդային քաղաքացի հանդիսացող ծնողի դիմումի համաձայն»:
Այս դեպքում նույնպես քաղաքացիություն չունեցող անձի համաձայնությունը անհրաժեշտ չէր, սակայն պահանջվում էր երեխայի համաձայնությունը, եթե լրացել էր նրա 14 տարին: 1978 թ. «ԽՍՀՄ քաղաքացիության մասին» օրենքը ամրապնդեց այն սկզբունքը, որ ԽՍՀՄ քաղաքացիների որդեգրած երեխան ձեռք է բերում ԽՍՀՄ քաղաքացիություն: 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեց, որ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող կամ քաղաքացիություն չունեցող անձ համարվող երեխան ԽՍՀՄ քաղաքացիների կողմից որդեգրվելու դեպքում ձեռք է բերում ԽՍՀՄ քաղաքացիություն: Երեխան քաղաքացիություն ընդունում էր անմիջապես որդեգրվելուց հետո: Ամուսնության և ընտանիքի օրենսդրության հիմունքների 24-րդ հոդվածի 3-րդ մասով անհրաժեշտ էր երեխայի համաձայնությունը որդեգրվելու համար, եթե լրացել է նրա 10 տարին: Այն դեպքում, երբ ինչ-ինչ պատճառներով որդեգրումը անվավեր էր ճանաչվում կամ դադարեցվում էր, ապա երեխայի քաղաքացիությունը սահմանվում էր հետևյալ կերպ. եթե դատարանը չեղյալ էր համարում 14 տարին լրացած երեխայի որդեգրման փաստը օտարերկրյա քաղաքացիների կողմից, ապա երեխան, միևնույն է, ձեռք էր բերում ծնողների քաղաքացիությունը⁹: Եթե 14 տարին լրացած երեխան ցանկություն էր հայտնում պահպանելու խորհրդային քաղաքացիությունը, ապա նա իր իսկ օրինական ներկայացուցիչների միջոցով կարող էր դիմել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն՝ քաղաքացիությունը պահպանելու խնդրանքով: Չափահաս դառնալուն պես նրան անմիջական իրավունք էր տրվում դիմելու ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն: Համաձայն քաղաքացիության մասին օրենքի 23-րդ հոդվածի՝ «օտարերկրյա քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրող ծնողներից մեկը Խորհրդային Միության քաղաքացի է, իսկ մյուսը՝ քաղաքացիություն չունեցող անձ, ապա երեխան ձեռք է բերում ԽՍՀՄ քաղաքացիություն»:
Այս դեպքում էլ որդեգրվող երեխայի ԽՍՀՄ քաղաքացիություն ձեռք բերելը տեղի էր ունենում անմիջապես

⁸ Кутафин О. Е., *у*зл. աշխ., էջ 333:

⁹ Նույն տեղում, էջ 334:

որդեգրման փաստը արձանագրելուց հետո՝ երեխայի համաձայնության դեպքում: Եթե երեխան քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ նրան որդեգրող ծնողներից մեկը խորհրդային քաղաքացի, ապա երեխան համարվում էր ԽՍՀՄ քաղաքացի: 23-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել էր, որ «եթե օտարերկրյա քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրող ծնողներից մեկը ԽՍՀՄ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ԽՍՀՄ քաղաքացիություն որդեգրող ծնողների համաձայնության դեպքում»: Որդեգրողների համաձայնությունը, որպես ազատ կամքի դրսևորում, պետք է օրինականացվի համապատասխան պետական մարմինների կողմից: Համաձայն 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «խորհրդային Միության քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը Խորհրդային Միության քաղաքացի է, իսկ մյուսը՝ քաղաքացիություն չունեցող անձ, պահպանում է ԽՍՀՄ քաղաքացիությունը»:

Այսպիսով, օրենքը կանխում էր երեխայի խորհրդային քաղաքացիությունը կորցնելու և նրա քաղաքացիություն չունեցող անձ դառնալու հնարավորությունը: 1990 թ. քաղաքացիության մասին օրենքը¹⁰ պահպանել էր երեխաների քաղաքացիության մասին ծնողների քաղաքացիության փոփոխման և որդեգրման դեպքում դրույթները, որոնք սահմանված էին մինչ այդ ընդունված օրենքներով: Դրա հետ մեկտեղ օրենքով սահմանվել էին նաև այլ դրույթներ, մասնավորապես՝ հաստատվել էր, որ եթե հայտնի է երեխայի ծնողներից մեկը, ապա այդ ծնողի քաղաքացիության փոփոխման դեպքում փոխվում էր նաև 14 տարին չըրացած երեխայի քաղաքացիությունը: Իսկ 25-րդ հոդվածը սահմանել էր, որ եթե ԽՍՀՄ տարածքում ապրող երեխայի ծնողները կամ նրանցից մեկը դուրս էին գալիս ԽՍՀՄ քաղաքացիությունից և երեխայի դաստիարակության հարցում մասնակցություն չէին ցուցաբերում, և այդ երեխայի նկատմամբ հաստատված էր ԽՍՀՄ քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, ապա այդ երեխան, ծնողների, խնամակալի կամ հոգաբարձուի միջնորդագրի համաձայն, պահպանում էր ԽՍՀՄ քաղաքացիությունը: Համաձայն 27-րդ հոդվածի՝ ԽՍՀՄ քաղաքացի հանդիսացող երեխան կարող է դուրս գալ ԽՍՀՄ քաղաքացիությունից, եթե նրա՝ խորհրդային քաղաքացի հանդիսացող ծնողը նույնպես դուրս է գալիս խորհրդային քաղաքացիությունից՝ տվյալ փաստի մասին միջնորդագիր ներկայացնելով համապատասխան մարմիններին:

ԱՊՀ տարածաշրջանում երեխայի քաղաքացիության վերաբերյալ մասնակից պետությունների օրենսդրությունները սահմանել են համանման դրույթներ՝ առաջնայնությունը տալով այն մտքին, որ երեխան չմնա առանց քաղաքացիության՝ անկախ որդեգրվելու, ծնողների քաղաքացիության փոփոխման կամ քաղաքացիություն չունեցող անձանցից սերվելու կամ ծնողների անհայտ լինելու հանգամանքներից:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը որոշակիորեն կարգավորում է երեխայի քաղաքացիության հարցերը, մասնավորապես՝ հիշյալ

¹⁰ Տե՛ս ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տեղեկագիր, 6.VI.1990, էջ 23:

օրենքի 3-րդ գլուխը նվիրված է երեխայի քաղաքացիության հարցերի կարգավորմանը: Երեխայի քաղաքացիության հարցերը կարգավորվում են երեք մասերով. 1) կապված ծնողների քաղաքացիության հետ, 2) կապված որդեգրման ժամանակի հետ, 3) կապված խնամակալության և հոգաբարձության ժամանակի հետ:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը երեխայի քաղաքացիության հարցերը կարգավորելիս առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով. 1) ընտանիքի բոլոր անդամների համար միատեսակ քաղաքացիության ապահովում, 2) 14-18 տարեկան երեխաների կարծիքը հաշվի առնելը քաղաքացիության փոփոխության ժամանակ, 3) երեխաների ապաքաղաքացիության բացառումը, 4) նրանց հնարավորինս ՀՀ քաղաքացիությամբ ապահովելը¹¹:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիությունն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

«ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը նախատեսել է նաև երեխայի քաղաքացիության հարցերի կարգավորումը ծնողի կողմից ՀՀ քաղաքացիությունը կորցնելու դեպքում: ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև տասնչորս տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Եթե ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, ապա մինչև տասնչորս տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ից դուրս, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը: «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը նախատեսել է նաև երեխայի քաղաքացիության հարցերի կարգավորումը որդեգրման ժամանակ: Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քաղաքացիների որդեգրած երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե՝ ա) առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը, բ) երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող որդեգրած ամուսնու համաձայնությունը, գ) երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

¹¹ Այվազյան Ն., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, դասագիրք բուհերի համար, Ե., 2000, էջ 334:

ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են օտարերկրյա քաղաքացիները կամ այնպիսի ամուսիններ, որոնցից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը: Նման դեպքում երեխան կարող է փոխել քաղաքացիությունը միայն որդեգրողների դիմումի համաձայն: ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխան, որին որդեգրել են քաղաքացիություն չունեցող անձինք, կամ որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը:

ՀՀ-ում գտնվող երեխան, որի ծնողներն անհայտ են, հանդիսանում է ՀՀ քաղաքացի: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել սույն օրենքին համապատասխան: ՀՀ քաղաքացի երեխան, որի նկատմամբ հաստատված է ՀՀ քաղաքացիների խնամակալություն կամ հոգաբարձություն, պահպանում է ՀՀ քաղաքացիությունը՝ անկախ նրա ծնողների՝ ՀՀ քաղաքացիությունից դուրս գալու հանգամանքից: Նման դեպքում երեխան կարող է դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից ծնողների դիմումով, եթե նրանք զրկված չեն ծնողական իրավունքից: Ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիությունը փոխվում է երեխաների համաձայնության առկայության դեպքում:

Ինչպես տեսնում ենք, թե՛ միջազգային փաստաթղթերում, թե՛ ներպետական օրենսդրությամբ փորձ է արվում կարգավորելու երեխայի քաղաքացիության հարցերն առավել մանրամասնորեն՝ բացառելով այն երևույթը, որ երեխան դառնա քաղաքացիություն չունեցող անձ: Մեր կարծիքով, այս հարաբերությունները կարգավորելիս պետությունները պետք է հաշվի առնեն իրենց ազգային առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը:

УРЕГУЛИРОВАНИЕ ВОПРОСОВ ГРАЖДАНСТВА ДЕТЕЙ ЗАКОНОДАТЕЛЬСТВОМ СССР И РА

ДАВТЯН Г. С.

Резюме

Гражданство – это устойчивая политико-правовая связь лица с определенным государством, характеризующая основы правового статуса личности. Гражданство является собой совокупность взаимных прав, обязанностей и ответственности. Демократизм характеризует принцип охраны интересов детей при определении их гражданства, нашедший свое закрепление во многих правовых актах. В вопросах гражданства детей при изменении гражданства родителей, а также при усыновлении, опекунов, попечительстве всецело должны учитываться интересы ребенка.